Թէպէտեւ Յոյնք խոստացան տալ նմա 30,000 դահեկան, զի գրեսցէ զնոսա հետեւակ Ցունաց եւ քաղաքապետան բռնադատէր զնոսա խոստովանիլ այնպէս, մինչեւ արդեալ զնոսա չերթալ բնաւ 'ի վանս Հայոց. բայց դատաւորն ոչ մատոյց ունկն բանից նորին։ Եւ միշտ հակառակութեամբ վարէր ընդ Թարգմանին Հայոց, և պատճառելով զայլ և այլ իրս կեղեքէր զնա, մինչեւ եհաս գումարն 2000, այլ նա ոչ ասէր երբէք բաւ. և առաւել գրգռեալ արդեալ նախատանօք զԹարգմանն մտանել յապարանս կառավարութեան, եւ սպառնայր կացուցանել պահակս 'ի դուռն վանաց. եւ 'ի միում նուագի մտեալ ուղտուք 'ի վանս սակս կրի՝ եւ բեռնաւորել զնոսա բռնութեամբ, և առ այս ոչ ինչ կարացին ընդդիմանալ միաբանք, եւ այլ սոցին նման անկարգութիւնք բազում, զորս աւելորդ է գրել. Թէպէտեւ սաստեաց նմա Դատաւորն քանիցս, այլ նա ոչ անսայր բանից նորա, յոյր սակս գրեաց առ Կուսակալն և ընկէց զնա յիշխանութենէ և կացոյց 'ի տեղի նորա զՀին քաղաքապետն, որ էր 'ի ժամանակի հրդեհին Ս. Յարութեան։ Իսկ վանցի Աւետիս Թարգմանն ճանաչեալ 'ի պաշտօնէ իւրմէ հրաժարեցաւ, և 'ի տեղի նորա եդին զՄկրտիչ վարդապետ զոմն, այր անվարժ եւ անհմուտ. լուեալ զայս գլխաւորաց ազգին գրեցին առ նա գիր սիրոյ և յորդորանաց, անտեղի համարել զոր ինչ լուեալն էր, և վարել զպաշտօն իւր խոհեմութեամբ յօգուտ Ս. Աթոռոյն, և նորա ստիպեալ սատի և 'ի յորդորական բանից Պատրիարքին և միաբանաց՝ վերստին յանձն առ զպաշտօնն։

Պարտատերք՝ որոց բազումք էին յազգէ Ցունաց՝ յաւելին զտոկոսս դրամաց՝ և պահանջէին զընծայս, և ապա սկսան խնդրել իսկ զմայր գումարսն, որով տագնապէր Թէոդորոս Պատրիարք։ Եհաս գիր հրամանի յերուսաղէմ առ երիս ազգս 'ի Կուսակալէն Դամասկոսի, առաքել անդ մէն մի բանիբուն անձինս՝ և ընդ նոսա վաւերական գրեանս, տնօրինել և հրամայել ըստ մտաց նոցին, և ըստ հրամանի Արքային կարգաւորել զամենայն գործս։ Յոյնք և Լատինք յղեցին, իսկ Հայք գրեցին գիր աղերսական ներել ինքեանց, զի վաւերական գրեանքն էին 'ի Կոստանդինուպոլիս։